

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2015-1-1-Ա

ք. Երևան

27.01.2015թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2015 թվականի հունվարի 27-ի նիստում քննարկեց 2014 թվականի սեպտեմբերի 29-ին արտոնագրային հավատարմատար Արարատի Գալոյանի կողմից ներկայացված՝ Մահարիշի Վեդիք Յունիվըրսիթի Լիմիթիդ (54 Marsamxett Road, Valletta, VLT 1853, Malta, MT) ընկերության (այսուհետ՝ բողոքարկող) «Տրանսցենդենտալ Մեդիտացիա» (հայտ №20121487) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» Կարգի 90-րդ կետի 3-րդ ենթակետի և 4-րդ ենթակետի «դ» պարբերության համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցան ժամանակը, տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ ապրանքների և (կամ) ծառայությունների այլ բնութագրերը նշելու համար: Տվյալ դեպքում «Տրանսցենդենտալ Մեդիտացիա»-ն հանդիսանալով մեդիտացիայի հատուկ տեխնիկա, որը մշակվել է հայտնի հնդկ գիտնական և մեծ ուսուցիչ՝ Մահարիշի Մահեշ Յոգիի կողմից և տարածում է ստացել ամբողջ

աշխարհով, բնութագրում է ծառայության տեսակը՝ մատնանշելով գործունեության այն ճյուղը, որին վերաբերվում է հայտարկվող նշանը: Ինչպես նաև ցանկանում ենք նշել, որ Մահարիշի Մահեշ Յոգիի կողմից ստեղծված տրանսցենդենտալ մեդիտացիայի հատուկ տեխնիկան տարիների ընթացքում դարձել է մեդիտացիայի տեսակներից մեկը, որը օգտագործվում է գրեթե բոլոր յոգա կենտրոններում և դպրոցներում, հետևաբար չի կարող հանդիսանալ որևէ մեկի մտավոր սեփականությունը: Վերոհիշյալը հիմք է հանդիսանում հայտարկվող ապրանքային նշանի գրանցումը մերժելու համար:

Կոլեգիայի անդամը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 90-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցան ժամանակը, տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ ապրանքների և (կամ) ծառայությունների այլ բնութագրերը նշելու համար: Տվյալ դեպքում մերժված նշանը տարիների ընթացքում դարձել է մեդիտացիայի տեսակներից մեկը, որը օգտագործվում է բազմաթիվ յոգա կենտրոններում և դպրոցներում, հետևաբար չի կարող գրանցվել:

Փորձաքննության բաժնի փորձագետը նշեց, որ բաժնի որոշումն իրավաչափ է և ներկայացված ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման:

Բողոքարկողը կրկնեց բողոքում ներկայացված իր կարծիքը այն մասին, որ բողոքը պետք բավարարել և ապրանքային նշանը գրանցել:

Համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Արարատի Գալոյանի կողմից ներկայացված՝ «Տրանսցենդենտալ Մեդիտացիա» (հայտ №20121487) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ

ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ